



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հուլիսի 2015 թվական N 102-Ա

**ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ «ՅՈԹ ՎԵՐՔ» ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ
ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Շիրակի Թեմի Սուրբ Աստվածածին «Յոթ Վերք» եկեղեցու երիտասարդաց Միություն «Գյումրու ուսանողական խորհուրդ» հասարակական կազմակերպության գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի հուլիսի 08-ին N8244 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. 2015 թվականի օգոստոսի 8-13-ը Սևանի Վազգենյան դպրանոցի բակում Շիրակի Թեմի Սուրբ Աստվածածին «Յոթ Վերք» եկեղեցու երիտասարդաց Միություն «Գյումրու ուսանողական խորհուրդ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվելիք հոգևոր երիտասարդական վրանային ճամբարի կազմակերպման և ծրագրի իրականացման նպատակով, որպես նվիրատվություն հատկացնել 400.000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (14)

Դեմ (0)

Ձեռնպահ(0)

- Ա.Ադամյան
- Գ. Ադամյան
- Ա. Բաղեյան
- Ա.Բաղդամյան
- Մ.Գաբրյան
- Ա.Գրիգորյան
- Վ.Եղիզարյան
- Հ.Խաչատրյան
- Հ.Կարապետյան
- Տ.Հովհաննիսյան
- Վ. Հունանյան
- Ն.Մեսրոպյան
- Ռ.Մխիթարյան
- Մ.Սահակյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

**ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ